ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության տեսության և պատմության ամբիոն, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ

ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՈՒՄ

Հոդվածում հեղինակները քննարկում են ճգնաժամի պայմաններում սովորողների սոցիալական ընկալումների, դրանց հոգեբանական փոխակերպումների դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև հոգեբանական անվտանգության վրա դրանց ազդեցության հիմնախնդիրները: Հետազոտական ճանապարհով բացահայտվել են ճգնաժամային, սոցիալական լարվածության պայմաններում սովորողների սոցիալական ընկալումների ձևավորման առանձնահատկություններն ու դրանց փոխակորպման հոգեբանական մեխանիզմները հոգեբանական անվտանգության բնութագրերում: Բացահայտվել են նաև սովորողների բնավորության, խելքի, նրանց հավակնությունների մակարդակների վերաբերյալ ինքնագնահատականը, ինչպես նաև նրանց հոգեբանական անվտանգության բնութագրերի փոփոխության առանձնահատկություններն ու հոգեբանական դետերմինանտները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ ճգնաժամ, սոցիալական ընկալում, փոխակերպում, հոգեբանական անվտանգություն, գործառութային վիճակ, հոգեկան առողջություն, հետվնասվածքային սթրեսային խանգարում, ինքնագնահատական, հավակնությունների մակարդակ:

Քսանմեկերորդ դարի առաջին տասնամյակներում համաշխարհային տնտեսական և ռազմաքաղաքական զարգացումներն առանձնահատուկ ազդեցություն ունեցան հասարակությունների, դրանցում ապրող մարդկանց ապրելակերպի և նրանց գիտակցության, ու արժեհամակարգի ձևափոխումների վրա: Սոցիալ-տնտեսական, քաղաքական լարվածության պայմանները, հավանական սպառնալիքների և օրեցօր ավելացող վտանգների ներկայությունը առանձնահատուկ ազդեցություն ունեն մարդկանց գիտակցության ու արժեհամակարգի ձևափոխումների վրա: Ճգնաժամային, սոցիալական լարվածության պայմաններում գործառութային ձևափոխության են ենթարկվում ինչպես մեծերի, այնպես էլ երեխաների հոգեկան ոլորտում ձևավորվող համոզմունքների, աշխարհայացքի ու ապահովության զգացման պատկերացումները: Արդյունքում փոխվում են միջանձնային փոխհարաբերությունները, միմյանց միջև փոխըմբռնման գործընթացները, հասարակության ներսում տեղի ունեցող երևույթների սոցիալական ընկալման յուրահատկությունները:

Հատկապես սովորողների շրջանում սոցիալական ընկալման գործառութային մեխանիզմների փոփոխությունները ժամանակի ընթացքում հանգեցնում են ներքին ու արտաքին միջավայրի միջև հակամարտությունների, ֆրուստրացիայի, ագրեսիվության, որի պատճառով պատանին միջավայրի հետ մշտապես գտնվում է հակասությունների մեջ: Սոցիալական լարվածության, ճգնաժամային պայմաններում հակասություններով հագեցած անձի առօրյան հանգեցնում է հոգեկան անհավասարակշռության, նյարդային դյուրագրգռվածության, ախորժակի կորստի, մղձավանջային, ընդհատումներով ու ծանր երազներով քնի, ընկերներից ու միջավայրից խուսափելու վարքագծի, օրգանիզմի աստիճանական հյուծման, անապահովության զգացման խորացման, և վերջիվերջո հանգեցնում հոգեբանական անվտանգության զգացման կորստի [5, 11]: Այդպիսի վիճակն աստիճանաբար տանում է սովորողների առողջական, մտավոր գործընթացների գործառութային հնարավորությունների անկման, սոցիալական գործընթացների նկատմամբ անհանդուրժողականության, որի պատճառով անձը կորցնում է օբեկտիվ իրականության զգացումը: Ամեն ինչ նրա համար դառնում է ժամանակավոր ու անհեռանկար: Անբարենպաստ զարգացումների այդպիսի պայմաններում անձի հետ տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են իրականության անհամարժեք, աղճատված ընկալումների, որոնք անձի հոգեկանում արտացոլվում են հուզական, վարքային դրսևորումների նորագոյացումներով: Այդպիսի ձևափոխումները հոգեբանական գրականության մեջ բնութագրվում են որպես փոխակերպումներ [2, 6, 10]:

Հոգեբանական փոխակերպումների հիմնախնդիրը հատուկ ուսումնասիրությունների առարկա է ճգնաժամային հոգեբանության համար: Հոգեբանական փոխակերպումները, կամ տրանսֆորմացիաները ուղղված են ապահովելու դրանցում ներգրավված համակարգերի գործառութային անընդհատությունն ու երևույթների աղդեցության նորովի զարգացումները՝ կատարելով այդ համակարգերում հավասարակշռության պահպանմանն ու հարմարմանն ուղղված պաշտպանական նորովի գործառույթներ [1, 7, 10]: Դրանցում կարևոր դեր են կատարում երևույթների համարժեք ընկալման կոգնիտիվ համակարգերը, իրենց վերլուծական ու համադրական, հարմարման ու պաշտպանական գործառույթներով: Ատակարգ, ճգնաժամային իրավիճակներում օրգանիզմի հավա-

սարակշռության, ամբողջականության պահպանման գործընթացում ներառվում են նաև սոցիալական ընկալման գործընթացներն ապահովող գործառութային համակարգերը [2, 5]:

Ճգնաժամերի պայմաններում անձի սոցիալական ընկալման մեխանիզմների հիմքում ընկած է այլ մարդու հուզական վիճակի սուբեկտիվ գնահատումը, նրա արարքների ռեալ ըմբռնումը և դրա հիման վրա սեփական վարքի փոփոխման ռազմավարությունը [2, 4]: Ճգնաժամային պայմաններում ապրող մարդկանց միջանձնային փոխըմբռնման, փոխճանաչման գործընթացում հանդես են գալիս սոցիալական ընկալման հետևյալ դրսևորումները. ռեֆլեքսիա, նույնականացում, էմպաթիա, ատրակցիա, ստերեոտիպիզացիա, պրոյեկցիա և այլն: Դրանցում առավել շրջանառվում են երկու կարևոր գործընթացներ՝ նույնականացումը և ռեֆլեքսիան: Նույնականացումը արտահայտում է մարդու ճանաչողական փորձի և ըմբռնվող երևույթի ստույգ համապատասխանելիությունը: Այս առումով՝ նույնականացումը հանդես է գալիս որպես այլ մարդու ճանաչման և հասկացման մեխանիզմներից մեկը [11]:

Միջանձնային փոխհարաբերություններում անհամեմատ բարդ երևույթ է ռեֆլեքսիան: Սոցիալական հոգեբանության տեսանկյունից ռեֆլեքսիան միջավայրի, հաղորդակցի նկատմամբ անհատի կողմից տրվող հոգեֆիզիոլոգիական հակազդումների ամբողջությունն է սեփական գործողությունների, հարաբերություններում ուրիշների կողմից իր իսկ անձի ընկալման արդյունքում տրվող գնահատականների նկատմամբ [8]: Հաղորդակցման ընթացքում մարդիկ ոչ միայն ըմբռնում են միմյանց, այլև միմյանց նկատմամբ ձևավորում որոշակի վերաբերմունք: Սոցիալական ընկալման գործընթացում կարևոր օղակ է նաև պատճառական վերագրման (կաուզալ ատրիբուցիայի) սխեման: Այն այլ մարդկանց վարքի հնարավոր պատճառների վերաբերյալ մարդու ընդհանուր հայեցակարգն է: Այն կառուցվում է երեք սկզբունքների հիման վրա՝ **արժեզրկման**, երբ տեղի է ունենում իրադարձության գլխավոր պատճառի թերագնահատման փոխարեն այլ պատճառների թերագնահատում, **ուժեղացման**, երբ իրադարձության մեջ կոնկրետ պատճառի դերը չափազանցվում է, **հետևողականորեն աղավաղման սկզբունք**, երբ առկա են տրամաբանության կանոններից դուրս մարդկանց վարքի պատճառների մեկնաբանման մշտական ձևական շեղումներ: Հաճախ հանդիպում է նաև «**Պրոյեկցիայի» էֆեկտը**, երբ մարդիկ իրենց համար հաճելի զրուցակցին են վերագրում սեփական արժանիքները, իսկ տհաճ զրուցակցին՝ սեփական թերությունները [12, էջ՝ 50]:

Ճգնաժամերի, սոցիալական լարվածության, զանազան սպառնալիքների ու հավանական վտանգների պայմաններում ապրող մարդկանց սոցիալական ընկալման այդպիսի ձևափոխումներն ու փոխակերպումները կապված են այն հանգամանքի հետ, որ դրանցում սրվում են անձի գոյատևման, կենսագործունեության պահպանման ռեֆլեկտոր մեխանիզմները [9, 2]: Ստեղծված պայմաններում անձի ամբողջականության պահպանման համար ներգրավվող մեխանիզմներից մեկը նրա հոգեբանական անվտանգության գործառույթներն ապահովող հոգեֆիզիոլոգիական համակարգերի ակտիվացումն է (նույն տեղում): Մեր կողմից կատարված դիտարկումներն ու հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալական միջավայրի անբարենպաստ զարգացումների պայմաններում անձի հետ տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են հոգեկան անհավասարակշռվածության, անապահովության, հոգեբանական անվտանգության կորստի զգացման [1, 2]: **Սովորող-**

ների հոգեբանական անվտանգությունը գոյություն ունեցող առկա և հավանական սպառնալիքների պայմաններում նրա բազմակողմանի պաշտպանվածության (ֆիզիկական, սոցիալական, կենսաբանական, հոգեբանական) սուբեկտիվ զգացումն ու համոզվածությունն է: Այն սովորողների անձի լիարժեքության ու նաև ուսումնական գործունեության արդյունավետության ապահովման կարողունակությունն է, որը զուգակցվում է ընդհանուր և հոգեկան առողջության լիարժեք զգացումով, որոշումների ընդունման և իրականացման ինքնուրույնությամբ, սոցիալական հմտությունների գործնական կիրառման կարողություններով, ինչպես նաև անձի բարձր ինքնագնահատականի արտահայտվածությամբ: Հոգեբանական անվտանգության զգացումը անձի կողմից իրականության սուբյեկտիվ ընկալման այնպիսի վիճակ է, որում նրանց առողջության, սոցիալ-հոգեբանական հնարավորությունները գերազանցում են միջավայրի անբարենպաստ պայմանների անհարմարություններն ու ի վիճակի են ապահովելու գործունեության արդյունավետություն, սեփական ուժերի նկատմամբ վստահություն ու խմբում նրա դիրքի կայունության պահպանում: **Սովորողների հոգեբանական անվտանգության զգացումը խիստ սուբեկտիվ վիճակ է: Այն զուտ հոգեբանական զգացում է՝ հիմնված ապահովության զգացման սեփական փորձի վրա:** Այս տեսանկյունից՝ խիստ արդիական է Համաշխարհային Առողջապահական Կազմակերպության (ՀԱԿ) կողմից առաջադրված երեխաների «Կյանքի հմտությունների» 10 կարողություններից բաղկացած համակարգը, որպես երեխաների հոգեկան առողջության և հոգեբանական անվտանգության լիարժեք զգացման հենքային բաղադրամասեր: Դրանք են. որոշումներ կայացնելու, ինքնուրույն խնդիրներ լուծելու, քննադատական մտածողության, ստեղծագործական մտածողության, հաղորդակցման, ակտիվ շփման, միջանձնային հարաբերություններում ազատ ինքնադրսևորման, ինքնաճանաչման, ապրումակցման, զգացմունքների տիրապետման, սթրեսակայունության և այլն [3]:

Հոգեբանական անվտանգության կորստի վիճակը աստիճանաբար հանգեցնում է վերը նշված հատկանիշների, ինչպես նաև սովորողների առողջական, մտավոր գործընթացների գործառութային հնարավորությունների անկման: Սոցիալական ընկալման գործընթացները դառնում են աղճատված, մոտիվացիոն ու արժեքային համակարգերը թուլանում են, դառնում պարզ ու առօրեական, որի պատճառով անձի հոգեկանում նկատվում է ամեն ինչի նկատմամբ անտարբերություն, կասկածամտություն, անվստահություն: Սովորողների համար առաջնային ու երկրորդական հանդիսացող երևույթները խառնվում են իրար, նրանք չեն կարողանում կենտրոնանալ իրենց հիմնական գործունեության վրա, չնայած, որ կարծես թե միշտ զբաղված են կարևոր գործերով: Հոռետեսությունն ու անտեղի, անպտուղ քննադատությունն ու փնթփնթոցները դառնում են բնավորության գծեր: Ինքնավստահության կորստի պատճառով նրանք դառնում են ամեն ինչի նկատմամբ կասկածամիտ, որի պատճառով փոխվում են նրանց գործունեության դրդապատճառները, նախկինում ունեցած սկզբունքներն ու համոզմունքները: Աստիճանաբար նրանք դառնում են անկայուն, «ցրված» ուիշների, նույնիսկ իրենց համար անհասկանալի ու անվստահելի, սեփական «ԵՍ»ը կորցրած անձնավորություններ: Հոգեբանական տեսանկյունից՝ այդպիսի բնութագրերը հետվնասվածքային սթրեսային խանգարումների (ՀՎՍԽ- Posttraumatic

Stress Disorder (PTSD)) դրսևորումներ են [4]:

Բազմաթիվ հեղինակների աշխատություններում արծարծվում է նաև այն գաղափարը, որ սոցիալ-տնտեսական, ընտանեկան ճգնաժամերի պայմաններում ապրող երեխաները, դժվարությունների ու անհարմարությունների հաղթահարման համար չունենալով դիմակայման, հարմարման սոցիալ-հոգեբանական հմտություններ և կյանքի անհրաժեշտ փորձ, ներքնայնացնում են իրենց համար խորթ ու դժվար գործոնների հետևանքով իրենց մոտ առաջացած հուզական լարվածությունը, դժգոհություններն ու անբավարարվածության զգացումը, որի պատճառով վնասվածքի ներգործությունը անցնում է խորքային կառույցների ֆունկցիոնալ հնարավորություններին: Ժամանակագրական առումով՝ վնասվածքը կարող է թաքնված պահպանվել շատ երկար [3, 5, 13]: Դեռ ավելին, **«...արտակարգ, ճգնաժամային պայմաններում երեխաների հոգեբանական դիմադրողականության ցածր հնարավորությունների պատճառով վնասվածքը փոխակերպվում է օրգանիզմի գործառութային համակարգերին՝ նվազագույնի հասցնելով նրանց պահեստային հնարավորություններն ու առողջության հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների բնութագրերը»** [1, էջ՝ 52]**:**

Արտակարգ, ճգնաժամային իրավիճակներում հոգեկանի պաշտպանական մեխանիզմներն ապահովում են, կամ ուղղված են չեզոքացնելու, նվազեցնելու անձի բացասական ապրումների ազդեցությունը, սթրեսորների ներգործությունը: Հոգեբանական տեսանկյունից՝ դրսևորվող հակազդումները պաշտպանական մեխանիզմների արտացոլում են, գործընթացներ, որոնք, ըստ Զ.Ֆրոյդի, հանդես են գալիս մերժման, ռացիոնալիզացիայի, արտամղման, պրոյեկցիայի, փոխհատուցման, ռեգրեսիայի, նույնականացման և այլ ձևերով: Ճգնաժամային պայմաններում հոգեկանի համար խորթ հանդիսացող ինֆորմացիայի ներգործությամբ ակտիվանում են ոչ միայն խորքային համակարգի ռեֆլեկտոր գործընթացները, այլև անձի մասնագիտացված կենտրոնների հակազդեցության փորձը, այդ ամենը իրենց մեջ պահպանող, ամբողջականացնող գոյացությունները-պատեռները [12, էջ՝ 182]: Այստեղ ըմբռնման գործընթացները ակցենտավորվում, գունավորվում են անձի դիրքորոշումներով, հուզական ապրումներով, փոփոխված մոտիվացիոն ու արժեքային համակարգերով և այլն: Պաշտպանական մեխանիզմների այդ համախումբն ուղղված է ապահովելու օրգանիզմի ու հոգեկան համակարգի ամբողջականությունը, գործառութային ակտիվությունը, հոգեբանական անվտանգությունը:

Սույն հոդվածում հետազոտության հիմնական առարկան սոցիալական տագնապի պայմաններում ապրող սովորողների սոցիալական ընկալման փոխակերպումների առանձնահատկություններն են՝ նրանց հոգեբանական անվտանգության բնութագրերի փոփոխությունները: Հետազոտական հիմնական աշխատանքներն իրականացվել են ՀՀ սահմանամերձ տարածքներում ապրող սոցիալ-տնտեսական լարվածության, պայմաններում ապրող 60 պատանիների ու աղջիկների հետ: Ստուգիչ խմում ընդգրկվել են մայրաքաղաքում ապրող նույնքան տղաներ և աղջիկներ: Տղաների և աղջիկների խմբերը երկու համակազմերի համար եղել են հավասար՝ 30-ական աղջիկներ և տղաներ: Հետազոտական խմբերում ընդգրկվել են ՀՊՄՀ-ի տարբեր ֆակուլտետների 1-4-րդ կուրսերի բակալավրիատի և 1-2-րդ կուրսերի մագիստրատուրայում սովորող ուսանողները: Աշխատանքում հետազոտել ենք ճգնաժամի պայմաններում սովորողների սոցիալական ընկալման փոխակեր-

պումները, անձի կառուցվածքային որոշ բաղադրամասերի գործառութային տեղաշարժերի առանձնահատկությունները՝ նրանց հոգեբանական անվտանգության բնութագրերում:

Առաջադրվել են հետևյալ խնդիրները. ճգնաժամային պայմաններին բնորոշ բացասական վիճակների բացահայտում, դեռահասների սոցիալական ընկալման առանձնահատկությունների, դրանց ձևափոխումների պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում, գերակայող հուզական ապրումների, շփման ու հաղորդակցման կարողությունների, ինքնագնահատականի դրսևորման առանձնահատկությունների հետազոտում և այլն:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական լարվածության պայմաններում ապրող պատանիներն ու աղջիկները դրսևորվում են եսասիրության ու ալտրուիզմի, ավտորիտարիզմի ու ենթարկվողության կասկածամտության ու կախվածության միտումներ: Դրանք վկայում են սովորողների ներքին կոնֆլիկտայնության, քողարկված հոգեբանական վնասվածքների, հուզական լարվածության մասին, որոնք արտահայտվում են սեփական ես-ի ու հակադիր պատկերացումների միաժամանակյա ռեֆլեքսիաների մասին:

Բոլոր մարդկանց մոտ, այդ թվում նաև հետազոտվող համակազմի համար խելքը, ընդունակությունները համարվում են անձի ինքնության, նրա ամբողջականության ու լիարժեքության սուբյեկտիվ գնահատականը:

Գծանկար 1





Ըստ Դեմբո-Ռուբինշտեյնի մեթոդիկայի սովորողների խելքի ինքնագնահատականի ուսումնասիրման արդյունքների՝(գծ.նկ.1) տղաների 67%-ի և աղջիկների 57%-ի մոտ նկատվում է սեփական խելքի ու ընդունակությունների գնահատման ցածր մակարդակ: Ստուգիչ խմում խելքի ու ընդունակությունների գնահատականը տղաների մոտ կազմում է՝ 70%, իսկ աղջիկների մոտ՝ 80%: Բնավորության ինքնագնահատականի ցուցանիշներում հետազոտվողների հիմնական խմբում ընդգրկված տղաների 80%-ը բնավորության գծերի արժեվորումը գնահատել է միջին մակարդակում, 20%-ը՝ բարձր: Աղջիկների մոտ դիտարկվում է ինքնագնահատականի 57% ցածր, միջին՝ 30% և 13% ՝ շատ բարձր մակարդակ: Սեռային առանձնահատկություններով պայմանավորված՝ աղջիկների համար բնավորության լավագույն գծերն ու դրսևորման պատշաճ կողմերը նրանց համար այցեքարտ են, շփման, հաղորդակցման գործիք:

Գծանկար 2





Անձի կարևորագույն բնութագրերից մեկը հավակնությունների մակարդակն է: Ստուգիչ խմբում ընդգրկված ուսանողները աչքի են ընկնում ինքնակառավարման ցածր հնարավորություններով:

Այդ իսկ պատճառով ինչպես միջանձնային փոխհարաբերությունները, այնպես էլ երևույթների սոցիալական ընկալման սահմանները իրական հնարավորություններից հաճախ հեռանում և հայտնվում են ինչպես հուզական, այնպես էլ վերտուալ աշխարհում (գծ. նկ. թիվ 3) : Հիմնական խմբի տղաները խելքի, ընդունակության հավակնությունների մակարդակում իրենց գնահատել են շատ բարձր 100%-ը (30 մարդ), իսկ աղջիկների մոտ՝ 80%, շատ բարձր և 20%՝ ցածր: Հավակնությունների մակարդակի այսպիսի արտահայտվածությունը խոսում է տղաների մաքսիմալիզմի, ծայրահեղականության մասին: Ստուգիչ խմբում տղաների 80%-ի մոտ նկատվում է շատ բարձր գնահատման մակարդակ, 10%-ի մոտ՝ միջին և 10%-ի) մոտ՝ ցածր:

Գծանկար 3





Աղջիկների շրջանում մասամբ արտահայտված է ցածր տոկոսայնություն, սակայն դա բացատրվում է սեռային առանձնահատկություններով: Ներանձնային և սոցիալական երևույթների նկատմամբ հետազոտվողների հավակնությունները բնութագրում են նրանց անձնային արժեհամակարգերը: Դրանցով պայմանավորված՝ սովորողները ժամանակի մեջ բավարարում են ինքնիրացման և ինքնահաստատման մոտիվների և հավականությունների պահանջմունքը:

Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ պատանիների ու աղջիկների հոգեբանական անվտանգության բնութագրերի բացասական փոփոխությունները արդյունք են միջավայրում տեղի ունեցող շարունակական փոփոխությունների, սոցիալ-տնտեսական դժվարությունների, դրանցում նրանց կողմից հարմարվել չկարողանալու, ինչպես նաև կենսագործունեության պահպանման համար սոցիալական հմտությունների, ինքնակառավարման, ինքնակարգավորման ունակությունների ցածր մակարդակի կամ դրանց բացակայության: Հետազոտության արդյունքների ամփոփումը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ սոցիալական տագնապի, ճգնաժամի պայմաններում ապրող պատանիների ու աղջիկների սոցիալական ընկալման գործընթացները ուղիղ համեմատական են միջավայրի անբարենպաստ պայմանների դժվարությունների, դեֆիցիտների յուրահատկություններին: Քաղաքաբնակ ուսանողների շրջանում սոցիալական ընկալման հնարավորությունները համարժեք են իրենց ինքնագնահատականին, բնավորության և սեփական խելքի, կարողությունների նկամամբ ունեցած ինքնագնահատականին: Չնայած, որ նրանց կողմից իրականության օբյեկտիվ ընկալման և գնահատման կարողությունը, միջավայրի հարաբերությունների նկատմամբ հանդուրժողականությունը համեմատած հիմնական հետազոտվող խմբի ցուցանիշների գտնվում է ցածր մակարդակում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտումյան Մ.Պ. Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները Երևան, 1999թ., 180 էջ:
2. Մկրտումյան Մ.Պ. Ճգնաժամային իրավիճակներում կամային ինքնակարգավորման հոգեբանական մեխանիզմները /Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները/ միջբուհական գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2007թ., էջ 71-80:
3. Громбах С.М. Школа и психическое здоровье учащихся. М. Медицина. 1988. -272 с .
4. Журавлева В.А, Сергиенко Е.А. Стресс, выгорание, совладение в современном контексте. М. Изд-во “Институт психологии ПАН”, 512с.
5. Котик М.А. Психология и безопасность. Таллин. Жалгыс. 1989. – 484 с.
6. Куликов Л.В. Психогигиена личности. Вопросы психологической устойчивости и психопрофилактики: Учебное пособие. – СПб.: Питер, 2004. – 464 с.
7. Леонова А.Б. Психодиагностика функциональных состояний человека. М.: “МГУ”, 1984, 136 с.
8. Маерс Д. Социальная психология . М., СПб, 2002. - 675 с.
9. Почебут Л.Г., Маижне И.А. Социальная психология. ПИТЕР, М.,СПб, 2010. – 672 с.
10. Раен А.А., Кудашов А,Р., Баранов А.А. Психология адаптации личности. СПб, 2006. -418 с.
11. Сандомирский М.Е. Защита от стресса. - СПб: Питер, 2009. – 304 с.
12. Фрейд З. Введение в психоанализ. Лекции. М.Наука, 456 с.
13. Фролова С.В. Психология преодоления ситуации насилия в семье (Феноменология переживания и пути оказания психологической помощи). – СПб.: Речь, 2012. – 112 с.

ТРАНСФОРМАЦИИ СОЦИАЛЬНЫХ ВОСПРИЯТИЙ УЧАЩИХСЯ В УСЛОВИЯХ КРИЗИСА В ХАРАКТЕРИСТИКАХ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

МЕЛЬС МКРТУМЯН

Заведующий кафедрой теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор психологических наук, профессор

ЛИЛИТ МКРТУМЯН

Доцент кафедры теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат психологических наук

ЛИЛИТ САРГСЯН

Аспирант кафедры теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье обсуждаются особенности проявления психологических трансформаций социальных восприятий учащихся в условиях кризиса, а также проблемы их влияния на психологическую безопасность личности. Экспериментальным путем выявлены особенности формирования социальных восприятий и механизмы трансформации в характеристиках психологической безопасности учащихся в условиях кризиса и социальной напряженности. Выявлена самооценка учащихся относительно характера, интеллекта и уровня притязаний, а также особенности и психологические детерминанты изменения характеристик психологической безопасности.

PSYCHOLOGICAL SAFETY ISSUES OF TRANSFORMATION OF STUDENTS' SOCIAL PERCEPTION IN CRISIS CONDITIONS

MELS MKRTUMYAN

Head of the Chair of Theory and History of Psychology, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Doctor of Psychological Sciences, Professor

LILIT MKRTUMYAN

Associate Professor of the Chair of Theory and History of Psychology, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, PhD in Psychology

LILIT SARGSYAN

Postgarduate Student the Chair of Theory and History of Psychology, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

The article discusses the particular manifestations of psychological transformation of students' social perception in crisis conditions and also the issues of their impact on person's psychological safety. The particularities of forming of social perception and the mechanisms of transformation in features of psychological safety of students in crisis are revealed experimentally. The self-esteem of students' identified character, the intelligence, as well as the level of aspiration are investigated. The features and psychological determinants of changes in the characteristics of psychological safety are taken into consideration in the article.